



ԼՂՀ ԿԱ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ
ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

2015 թվականի գործունեության
տարեկան
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌԸՆԹԵՐ ՇՐՋԱԿԱ մԻՋԱՎԱՅՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
2015 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

2015 թվականին ԼՂՀ ԿԱ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության կողմից իրականացված աշխատանքների հիմնական նպատակն եղել է ԼՂՀ կառավարության 2015 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և ԼՂՀ կառավարության ռազմավարական նշանակության ծրագրերով նախատեսված ընդերքօգտագործման և բնապահպանության ոլորտների գծով գերակա խնդիրների կատարման ապահովումը:

Վարչության համակարգում կատարված աշխատանքներն, ըստ առանձին ծրագրերի և ոլորտների բնութագրվում են հետևյալ հիմնական ցուցանիշներով.

Օրենսդրություն

2015 թվականին ԼՂՀ ԿԱ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության կողմից մշակվել են ոլորտը կանոնակարգող շուրջ 27 իրավական ակտերի նախագծեր: Դրանցից տարվա ընթացքում սահմանված կարգով ընդունվել է 24-ը, մնացածը գտնվում են քննարկման փուլում:

ԼՂՀ պետական անտառային ֆոնդում անտառային միջոցառումներ 2015 թվականի ծրագիր.

Անտառների պահպանությանը, պաշտպանությանը, վերարտադրմանը և անտառօգտագործմանն ուղղված մի շարք միջոցառումներ են իրականացվել, մասնավորապես բնական աճի աջակցման, բնական աճի ուսումնասիրության, անտառային ճանապարհների կառուցապատման ու վերանորոգման և բնափայտի մթերման տարեկան չափաքանակի ապահովման ուղղությամբ:

Բնական սերմնային աճի աջակցմանն ուղղված ծրագրով 2015 թվականի ընթացքում իրականացվել է 100 հեկտար տարածքի մաքրում և փխրեցում:

Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել են 2013 և 2014 թվականների ընթացքում տնկված համապատասխանաբար 15 և 1,2 հեկտար անտառկուլտուրայի խնամքի աշխատանքներ:

Բնափայտի մթերման համար հատատեղերի հատկացման նպատակով կատարվել է անտառային ուսումնասիրություններ և նշանակվել են հատումներ 982 հեկտար տարածքի վրա՝ 5511 մ³ գործափայտի և 23602 խտացված մ³ վառելափայտի մթերման համար:

ԼՂՀ-ում գիշատիչների գլխաքանակի կարգավորման միջոցառումների 2015 թվականի ծրագիր.

ԼՂՀ-ում գիշատիչների գլխաքանակի կարգավորման միջոցառումների 2015 թվականի ծրագրի իրականացվել են գիշատիչների գլխաքանակի կարգավորման, կենսատեխնիկական միջոցառումներ: 2015 թվականին որսված 29 գայլերի և 60 շնագայլերի դիմաց սահմանված կարգով որսորդներին տրամադրվել են խրախուսումներ, ընդամենը՝ 3 380 000 ՀՀ դրամ:

Ընդերքօգտագործում

Հաշվետու ժամանակաշրջանում լիազոր մարմնի կողմից ուսումնասիրվել են ներկայացված հանքարդյունահանման և երկրաբանական ուսումնասիրության լիցենզիա ստանալու հայտերը, որի արդյունքում տրամադրվել է 5 ընդերքօգտագործման թույլտվություն, որից՝

- 5 օգտակար հանածոների արդյունահանման,
- 9 երկրաբանական ուսումնասիրության,

Դադարեցվել են 5 ընդերքօգտագործման թույլտվություն:

2015 թվականի ընթացքում օրենսդրությամբ սահմանված կարգով երկարաձգվել են 10 ընդերքօգտագործման իրավունքի ժամկետները, վերաձևակերպվել 4 ընդերքօգտագործման թույլտվություններ:

Վարչության կողմից ընդերքի օգտագործման համար գանձված պետական տուրքերը և տույժերը 2015 թվականին ԼՂՀ պետական բյուջե է մուտքագրվել 46 971 250 դրամ պետական տուրք:

Բնապահպանական փորձաքննություն

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն իրականացնելու նպատակով տնտեսավարող սուբյեկտների կողմից ներկայացված դիմումները քննարկելուց և ներկայացված փաստաթղթերի լիարժեքությունը ստուգելուց հետո կնքվել են պայմանագրեր, և օրենքով սահմանված կարգով իրականացվել են համապատասխան փորձաքննություններ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության է ներկայացվել նախատեսվող գործունեությունների 57 հայտ, որոնցից 39-ին տրվել է դրական եզրակացություն, 18 հայտ վերադարձվել է թերի լինելու պատճառով:

2015 թվականին կատարված աշխատանքների արդյունքները 2014 թվականին կատարվածի համեմատ ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	2014 թվական		2013 թվական	
		Ներկայացված հայտերի և կնքված պայմանագրերի քանակը	Գումարը (հազ. դրամ)	Ներկայացված հայտերի և կնքված պայմանագրերի քանակը	Գումարը (հազ. դրամ)
1	Բնապահպանական պետական փորձաքննություն իրականացնելու հայտ	57	*	49	*
2	Կնքվել է բնապահպանական պետական փորձաքննություն իրականացնելու հայտ	39	4170,6	49	3985,5
Ընդամենը՝		x	4170,6	x	3985,5

Ծառահատումների թույլտվություններ

Ստեփանակերտի քաղաքապետարանի, ԼՂՀ շրջվարչակազմերի, գյուղական համայնքների, տարբեր կազմակերպությունների ու քաղաքացիների կողմից ծառահատում և ծառերի երիտասարդացում իրականացնելու նպատակներով ներկայացված 49 դիմումների հիման վրա տեղում կատարվել են դրանց կենսական վիճակների ուսումնասիրություններ և համապատասխան քննարկումների արդյունքում տրամադրվել՝ 33 թույլտվություն: 3 դիմում մերժվել է, ծառահատումների պայմանները իրավական ակտերի պահանջներին չհամապատասխանելու պատճառով, 2-ը վերադարձվել է վարչության լիազորություններին չհամապատասխանելու պատճառով: Մնացած դիմումները գտնվում են ուսումնասիրության փուլում:

2015 թվականին ծառահատման և ծառերի երիտասարդացման թույլտվությունների քանակը պակասել է 6-ով:

Որսի թույլտվություններ

Որսի օբյեկտ հանդիսացող որոշ կենդանատեսակների որսաշրջանում՝ որսորդներին և ձկնորսներին, համապատասխան փաստաթղթերի արժանահավատությունը ստուգելուց և ընդունելուց հետո, տրամադրվել են 221 թույլտվություններ, այդ թվում՝ 208-ը սիրողական որսի, իսկ 13-ը՝ ձկնորսություն իրականացնելու համար:

Տրամադրված թույլտվությունների դիմաց պետական բյուջե է մուտքագրվել 1127100 դրամ:

Այս ոլորտի աշխատանքները կատարվել են տարվա որսաշրջանի ընթացքում և վերահսկվել են:

2015 թվականին կատարված աշխատանքների արդյունքները 2014 թվականի ընթացքում կատարվածի համեմատ ներկայացվում են ստորև բերվող աղյուսակում.

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	2015 թվական		2014 թվական	
		Քանակը	Գումարը (հազ. դրամ)	Քանակը	Գումարը (հազ. դրամ)
1	Կենդանատեսակների որսի քանակ	815 հատ	1010.1	1026 հատ	963.7
2	Ցանցով ձկնորսություն	1200 կգ	36.0	-	-
3	Թառփով ձկնորսություն	2700 կգ	81.0	3900 կգ	117.0
Ընդամենը՝ մուտքագրվել է պետբյուջե		x	1127.1	x	1080.7

Ջրային ռեսուրսներ

Տնտեսավարող սուբյեկտների կողմից ջրօգտագործման թույլտվություն ստանալու նպատակով ներկայացված հայտերի հիման վրա, ԼՂՀ Ջրային օրենսգրքի պահանջներին ջրօգտագործման պայմանների համապատասխանության ստուգման նպատակով, տեղում ուսումնասիրվել է 35 ջրառի օբյեկտ և համապատասխան քննարկման արդյունքում տրամադրվել 29 ջրօգտագործման թույլտվություններ: Տրամադրված ջրօգտագործման թույլտվությունների դիմաց ԼՂՀ պետբյուջե է մուտքագրվել 227 000 դրամ:

2015 թվականին ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման քանակը 2014 թվականի համեմատ նվազել է, երկարաձգումների քանակը՝ ավելացել է 4-ով, մուտքերը պետական բյուջե 2014 թվականի համեմատ չեն ավելացել:

Հողերի կառավարում

ԼՂՀ շրջանների վարչակազմերի և համայնքների ղեկավարների դիմումների համաձայն, հողերի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու նպատակով նախատեսվող գործունեությունների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման տեսանկյունից կատարվել են համապատասխան ուսումնասիրություններ, իսկ բնապահպանական փորձաքննություն իրականացնելուց հետո տրամադրվել են գրավոր համաձայնություններ՝ դրանց փոփոխման վերաբերյալ: ԼՂՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 28-ի «Հողերի նպատակային նշանակության (կատեգորիայի) փոփոխման կարգը սահմանելու մասին» N85 որոշման պահանջներին չհամապատասխանող դիմումները մերժվել են:

Բնապահպանական և բնօգտագործման վճարների ոլորտում՝

Բնապահպանական և բնօգտագործման վճարների հաշվարկ հաշվետվություն են ներկայացրել 114 հիմնարկ-ձեռնարկություն:

Տեսչական վերահսկողական աշխատանքներ

Հաշվետու ժամանակահատվածում հանրապետության տարածքում բնապահպանական և ընդերքի պետական տեսչության կողմից կատարվել են 17 ստուգայցեր՝ ըստ «Բնապահպանական վերահսկողության մասին» ԼՂՀ օրենքի 22-րդ, 24-26-րդ հոդվածների պահանջների:

Բնապահպանական և ընդերքի պետական տեսչության կողմից ստուգայցերի ընթացքում հայտնաբերվել և օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացքավորվել են 56 տարբեր տեսակի իրավախախտումներ, որոնց հաշվարկված վնասի չափը կազմել է 40961100 դրամ, իսկ վարչական տուգանքը՝ 610000 դրամ:

Կենդանական և բուսական աշխարհի օգտագործման և պահպանության ոլորտում՝

• Ապօրինի ծառահատման փաստով հայտնաբերվել և արձանագրվել է 12 իրավախախտում:

1. Կազմված 12 արձանագրություններով հաշվարկված վնասի չափը կազմել է 13 093 200 դրամ:

2. Կազմված 12 արձանագրություններից ԼՂՀ ոստիկանություն է ուղարկվել 9 վարույթ՝ 12 531 500 դրամի չափով:

• Ապօրինի անտառահատման փաստով հայտնաբերվել և արձանագրվել է 32 իրավախախտում, որոնք կատարվել են 32 քաղաքացիների կողմից:

1. Կազմված 32 արձանագրություններով հաշվարկված վնասի չափը կազմել է 17342700 դրամ, 256900 դրամ մուծվել է պետբյուջե, չմուծված 17085800 դրամը ընթացքի մեջ է գանձելու նպատակով:

2. Ոստիկանություն է ուղարկվել 22 վարույթ՝ 16073700 դրամի չափով:

3. ԼՂՀ ՎԻՎ օրենսգրքի 66-րդ հոդվածով վարչական պատասխանատվության է ենթարկվել 6 քաղաքացի՝ 470000 դրամի չափով, նշված գումարը կամավոր

չվճարելու պատճառով՝ վարույթները ուղարկվել են ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան գանձելու նպատակով:

• Ապօրինի որսորդության փաստով հայտնաբերվել և արձանագրվել է 3 իրավախախտում, որոնք կատարվել է 3 քաղաքացիների կողմից:

1. ԼՂՀ ՎԻՎ օրենսգրքի 88-րդ հոդվածով վարչական պատասխանատվության է ենթարկվել 2 քաղաքացի՝ 140000 դրամի չափով, որը կամավոր մուծվել է պետբյուջե:

2. Կազմված 3 արձանագրություններով հաշվարկված վնասի չափը կազմել է 660000 դրամ, որը կամավոր մուծվել է պետբյուջե:

• Ապօրինի ձկնորսության փաստով հայտնաբերվել և արձանագրվել է 5 իրավախախտում, որը կատարվել է 5 քաղաքացու կողմից:

1. ԼՂՀ ՎԻՎ օրենսգրքի 89-րդ հոդվածով վարչական պատասխանատվության է ենթարկվել 5 քաղաքացի՝ 743000 դրամի չափով, որից կամավոր մուծվել է պետբյուջե 653000 դրամ, չմուծված 90000 դրամը ընթացքի մեջ է գանձելու նպատակով:

• Հրկիզելու և (կամ) կրակի հետ անփույթ վարվելու հետևանքով բուսական աշխարհի ոչնչացումը և (կամ) աճի դադարեցման աստիճանի վնասման փաստով արձանագրվել է 1 դեպք: Կազմված արձանագրությունով հաշվարկված վնասի չափը կազմել է 504 000 դրամ, որը սահմանված կարգով ուղարկվել է ԼՂՀ Ոստիկանություն:

Ընդերքի օգտագործման և պահպանության ոլորտում՝

Ընդերքօգտագործման թույլտվությունների և պահպանության ոլորտում ստուգվել է 2 կազմակերպություն: Կազմակերպություններից մեկում հայտնաբերվել է իրավախախտում և կազմվել համապատասխան արձանագրություն, ուղարկվել ըստ ենթակայության՝ Ստեփանակերտի քաղաքապետարան համապատասխան միջոցներ ձեռնարկելու նպատակով:

«Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպություն.

ԼՂՀ կառավարության որոշմամբ 2015 թվականի համար հաստատված 9 700 խտացված մ³ գործափայտի և 110 300 խտացված մ³ վառելափայտի մթերման համար անտառօգտագործողներին տրամադրված թույլտվությունների հիման վրա <<Արցախանտառ>> ՊՈԱԿ-ի և անտառօգտագործողների միջև կնքվել են բնափայտի մթերման պայմանագրեր:

Հաշվետու ժամանակահատվածում մթերվել է՝

- 4675 մ³ գործափայտ
- 107 566 դարսված մ³ վառելափայտ
- թափուկից 11 192 դարսված մ³ վառելափայտ:

2015 թվականին «Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության պահպանման ծախսերը կազմել է 201505581 դրամ, որը ֆինանսավորվել է պետբյուջեից, կազմակերպության հաստիքների քանակը կազմել է 200 հաստիք, ավտոմեքենաների քանակը 5:

Վարչատնտեսական գործունեություն և գործավարություն

Բյուջետային միջոցների հաշվին համակարգի պահպանման ծախսեր

(հազ. դրամ)

Տարի	Նախահաշվային պլան	Ֆինանսավորում	Մնացորդ
2013թ.	94508.7	79857.867	14650.833
2014թ.	117348.7	105012.0	12336.7
2015թ.	158461.4	146986.5	11474.9

Վարչատնտեսական գործունեությունը բնութագրող ցուցանիշներ

Տարի	Աշխատողների միջին ցուցակային թիվը	Ավտոմեքենաների քանակը տարեվերջին
2013թ.	44	3
2014թ.	44	4
2015թ.	48	3

Ընդհանուր առմամբ 2015 թվականին ԼՂՀ ԿԱ շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության աշխատակազմ մուտքագրվել է իրավաբանական անձանցից և քաղաքացիներից, պետական մարմիններից և նրանց ենթակա կազմակերպություններից 1409 մտից փաստաթուղթ, ելքագրվել՝ 2468 գրություն: